

անող) պառաւանները երիւք անգամ ձձմի վրայով էլ շէշահ ալս
ու ալս կողմը, և աղօթք մի պտպտալով էլ Բարեշայնէն:

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՐԵՐ

Աստուծոյ մասին ժողովրդի ղիտութիւնը Ս. Գրքի տուած
տեղեկութիւնից ալս դին չանցնիր. զիտցածնին ևս խիստ
կցկտուր և մոլթ գաղափարով կարտայայտեն ղիւղացիք:

«Աստուած՝ ղորաւոր, լուսաւոր, երկնուց ու ղետնուց ստեղ-
ծողն է, չորս կողմ՝ Սերորէք, Քերորէք, Ս դաս Հրեշտակներ
կանուկ են, «եօթ խաբ քանց երկինք վերև» ղրած է նորա
լուսեղէն Աթուր:

Հայր Աստծուց յետոյ, ամէն խօսակցութեան, աղօթքի,
բարեմաղթութեան, անէծքի և օրհնութեան ժամանակ շարու-
նակ կը լիշուի «Յիսուս-Քրիստոսը», որու ծագման մասին բնաւ
գաղափար չունենալով՝ լսելով միայն ղիտեն որ «Աստծու որդի է»:

Ս. Հոգու մասին՝ երբէք գաղափար չունին, և բացի
«անունն չօր և Որդւոյ և Ս. Հոգւոյ» աղօթքից, որով երեսնին
կը խաչակնքեն, ուրիշ պարագային չլիշուիր:

Աւաւտեան՝ արշալուսին, երբ ղիւղացի կինը երեսը դէպի
«Հայոց ս. Աղօթարանը» դարձուցած սրտաբուղի կաղօթէ,
այսպէս կարտայայտէ իւր հաւատոյ հանգանակը.

„Օրշնեալի Աստուած, օրշնեալի բարի լուսու քաղցրիկ Քրիստոս,
էջ շաղաթաթալս հայոց սուրբ աղօթրան, էջ չորեք կողման սրբեր,
Սերորէք, Քերորէք, ինն դաս Հրեշտակներ, բարեխօս ելնաք աւ Աս-
տուած“:

„Եւ Տիրամար ս. Աստուածածին, եւ Մշու սուլտան սուրբ Կա-
րապետ, ատենահաս (ժամանակին հասնող) բօղ ձիււոր սուրբ Սար-
գիս, իմ ձեռն ի ձեր փէշն իմ թալի (երկարացնել, ձգել, քցել), բա-
րեխօս եղնիք արար (ընդհանուր) աշխարհքին, իմ մեղաւոր հոգուն“:

„Մեղան իմ քղղի Աստուած, մեղան Աստծու Աստուած, երկրի և
երկրի (երկնքի և երկրի) ստեղծող Աստուած, մեղան քեզ Տէր, դու
գքու ստեղծած հոգին չկորցուս, իմ մեղք շատէ քանց քարնի քրուէն,
քանց աւաղն ի ծովէն, քանց թուփն ծառէն, Աստուած, դու իմ
մեղք չաչիս (ի նկատի չառնես) իմ խեղճն (խեղճութիւնը) աչքիս:
Տէր, դու ողորմանաս հաւէ ու Դու հիւսիս (քրդ. = 72 ազգաց), ամե-

նեցու(ն) (ի սէր, յողորմութիւն) իմ տան ընտաւորին, իմ դարիւր-դուրբաթին, իմ մէկ ու ճար (միամօր) պարսիկն *), յետեւ զահուն (ժամանակին) իմ մեղաւոր յանարժան հոգուն»:

«Տէր, դու չհանիս ահն ի սրտէն, չտանիս ամօթնի յերեսէն. դու զջար խափանիս՝ զբարին բերիս. չար երազն ի բարին դարձուս. ամէն փորձանքից հեռու պահիս: Քու աջն հովանի եղնի, Տէր, մեղաց քեզ»:

«Է՛յ կապուտ վրան (երկինք) քի իմ ապաւինի»:

Սրբերից ամենաշատ ժողովրդականութիւն վայելողը և նշանաւոր իրենց տուած պատիժներով կամ տուածուրիկ շընորհքներով՝ հետեւեալներն են:

1. Բայո* (սպիտակ, խալտաբղետ, նախշուն) Կոթիկ (զմբէթ), Կոթիկ Երանայ (զլիսու ծածկոց), Խալտան Երանայ Ս. Տիրամէրը, որու նշանաւոր ուխտատեղի վանքը կը գտնուի Արճէշի Ականց գիւղը, և յայտնի է մարդոց վրայ թափած Գողթն Երանայ (զողութիւն): Տիրամօր գողութեան տան ունեցողը, պէտքէ եօթ տարի մուրաջ յօգուտ լինելով վանքին, ապա հաւաքած ողորմութիւնը տանէ նուիրելու ս. Տիրամօր և վանքի աղբիւրի ջրովը լուացուի որ լաւանայ. իսկ եթէ չլաւացաւ կը դառնայ մշտական Խալ (ծառայ) Ականցու վանքին և ցմահ պէտքէ աշխարհքներ պտտի և մուրալով ապրի:

Տիրամօր նշանը կրնկնայ նաև անասուններու վրայ ևս, բայց չէ թէ վէրք կը լինի, այլ ուղղակի «Կոթիկ» մարմնոյ մի որ և իցէ անդամի վրայ. այդ նշաններով անասունները երկիւղածութեամբ ու վախովախելով կը յանձնեն վանքի անուշով շրջող անձանց: Հետեւեալ ժողովրդական երգը ցոյց կուտայ Ականցու ս. Տիրամօր՝ ժողովրդի հոգու և սրտի վրայ թողած ապաւորութիւնը:

ա. Քեզ հաւատամ, խոստովանիմ,
Կանանչ չուբար սուրբ Տիրամէր,
Տաճարիդ երկրպագիմ,
Չատ պիտուական սուրբ Տիրամէր:
բ. Քուսմբէթդ էր շինած բալաք՝

*) Պարսիկ կը նշ. 1. (փնջիկ մի) մազ. 2. Կոթիկ:

- Դուռն էր վրէն հաւիտ ¹⁾
 Վին օր զարկէր՝ կէնէր հաւիտ ²⁾
 Քառահէքիւմ ³⁾ սուրբ Տիրամէլր
 գ. Քու ձին մըջ ըռախտին ⁴⁾ խշաշ
 Ձիուդ քամին մարդ կը շքշաշ
 Վին օր զարկէ շատ կը նխշէ
 Էնոր զարկած եարէն չէք ⁵⁾
 դ. Գովամ քումբէթ բանձր սարէն,
 Լուս կը բոխայ ⁶⁾ մարմար քարէն.
 Ողորմանայ լուս տանարէն,
 Իմէս կանի կըզի՝ չարէն.
 ե. Գովամ քումբէթդ, ոսկի խաչեր,
 Ըխտաւորներ՝ ճէշ մանչեր,
 Դուռդ կիզայ ընտրով ⁷⁾ խոչեր ⁸⁾
 (Ջատ եարայու նստած դռներ)
 Թափի մատներ՝ մանցի կոճեր ⁹⁾
 զ. Գովամ քումբէթդ, նխշուն օդէն,
 Չուզիմ հեռանայ քու մօտէն,
 Ձիւ կշտանայ անուշ հոտէն,
 Քարահէքիւմ սուրբ Տիրամէլր
 է. Խոյնի Վարդան ¹⁰⁾՝ գովաց քըզի,
 Դու էր շնորհք տուի մըզի,
 Դու օգնական ու պահպան՝
 Քարահէքիւմ սուրբ Տիրամէլր

2) Մշու Սալման հոսք Կարապետ, որ ամէն իրեն դիմող «ձիւաւոր և հետաւոր» ուխտաւորի հոսքը (յղձացածը, փափաքը) կուտայ և կը կոչուի հոսքաւոր ս. Կարապետ, այդ պատճառով ազապ աղջիկները և տղայք եօթ տարի ս. Կարապետին պատը կը պահեն (ս. Յարութեան Զատիկի մինչև վարդաւառ. միայն շաբաթ և կիրակի օրերը եղէշէնով պատերնին կը լուծեն). որպէս զի իրենց սրտի հոսքը հասնին:

Ս. Կարապետի մասին հետեւեալ աւանդութիւնը կա. «Գրիգոր Լուսաւորիչը երբ որ ս. Կարապետու մարմինը Ղաչսարու (Վեսարիա) քաղքէն բերեց, բարձր էր վըր ջորու մի, պէտք է տանէր Մշու դաշտ վըր Բաշա (Բազուա) սարին բազմեցուցէր, էն վախտն որ ջորին

¹⁾ Հրեշտակ. ²⁾ Սատակեցնել. ³⁾ Վիրաքոյթ-բօիշկ. ⁴⁾ Սարք, կազմած երկվարի. ⁵⁾ չալտնի է. ⁶⁾ Բղխել. ⁷⁾ Ընտիր. ⁸⁾ Խոյ. ⁹⁾ Ոսկորները ափի, ձեռքի:
¹⁰⁾ Խոյեցի Վարդան, երգիչ (աշըղ):

բարձած՝ տուեց սարի կող՝ վրը ճամբուն՝ քարի մի վրա շուր՝, և ծընկնեցու տեղը դժուար (գուրբ, փոս լինել), այդ պատճառով փոսացած տեղը կոչուեցաւ ջրահեղձ:

«Ի՞նչ սարի վրէն քիչ (շիւաբնակ) էր, Լուսաւորին որ գտա՝ ճարի հիւմ տուեց թալիլ (ձգել), հարի իրիկուն պատեր կը շինէն, լուսուն կը տեսնէն քար քարի վրայ դրուկ չկայ, դիւան (դեւեր) կը քանդէն: Զեղաւ՝ ս. Կարապետ մըզ յերդեն ըսեց. ձեր տուն չաւրի. հիմն որ կը թալիլ՝ ոճէք՝ հապամ (ապա) զպատեր շարէք: Զհիւմ կօծնեն (օծել), զժամ կը կանգցուն, Լուսաւորին էլ զդիւան կը բռնէ լցէ ջրով. մինակ հաւ դեւ կընկնայ լուսաւորչու օտք ու ձեռք, խնդիրք կէնէ, կըսէ. զիսի մի թալիլ գնդան, ուխտ եղնի յառաջի Աստուծուն, հարի աշխարհքի վերջ զս. Կարապետու թունդրի փոշին ամէն օր գիշերով տանիմ թափիմ քիչ—քիչս:»¹⁾

Ժողովուրդը կը հաւատայ, որ մինչև հիւմ ևս դեւերու խելահալ (ձայն, աղմուկ) գնդանից կը լսուի և ս. Կարապետի վանքի թունդրի տակը երբէք փռի չգործի:

3. Զիւրիկի հոգի փռիլն ու Գեորգի.— Ինչպէս վերև լիշուեցաւ՝ հոգի զարկելու և աղեթափութիւնը (ճողել, hernie) առողջացնելու շնորհքը փութիլի ս. Գեորգը կուտայ:

4. Ս. Սարգիս.— Երուշման թագաւոր մէ (մի) կելնայ վրը Ուռումի թագաւորին, շատ նեղ կը լծէ գէղի. Ուռումներ լէ հայոց թագաւորից Խաթա (օգնութիւն) կուզին: Հայերուց Սարգիս (ըստ ոմանց Սարգիս Մարտիրոս) անւոր մարդ մէ գուր ասքար (զօրքը) կառնէ կերթայ յօգն, (օգնութիւն), կուռ մէջ Սարգիսն ու ուր ասքար շատ քաջութիւն կէնին՝ զՈւռումներ կազատեն: Ուռումներու թագաւոր զարգանդ (վախ, զարհուրանք) կը բռնէ, հայ հօ, կըսէ, իդա հմա քաջ ազգ լէ կեղնի, զադոնք օր թողինք սաղ մնան՝ օր մէ չէ՝ օր մէ, մըր գլխուն պատիժ կը դառնան: Կուռ մէջ Սարգսի ասքար չըմէն ջարդուաւ. մանցին քառսուն հոգի. թագաւոր կըսէ. էդ քառսուն մարդոց քառսուն աղջիկ տուէք. թանպէհ էրէք (պատուիրեցէք) օր գիշերով հարբեցուն՝ սպանենս:

«Աղջկներ՝ յերկուն օր կեղնի, կուտեն կը խմեն հընր տղէկներուն, կը հարբեցուն, էն վախտն օր կը քնին. յեռսուն ու ին աղջկներ զեռսուն ու ին տղէն լէ կսպանին. մենակ մէկ աղջիկ կը նստի Սարգսի գլխու վերև մորմոր (մորմօքելով) կիւայ. կիւայ կիւայ՝ գիւ գիւ արտսունք կը գլորեն թափեն վրը Սարգսի ճակտին, Սարգիս

¹⁾ Դիարբէքիւրից ներքև սոցն անունով նշանաւոր կամուրջ մի:

²⁾ Ս. Կարապետի մասին եղած ժողովրդական երգի մէջ այս զրոյցները կը լիշուեն, որ ծանօթ լինելով ամենքին այստեղ առաջ բերինք:

կ'իմնայ (արթննալ)։—Եւ, կըսէ, խէր (բարի) եղնի, յօրին կիլաս։—Ապա իմալ չի լամ, թագաւոր հրամանք է էրի օր զձրդի սպանինք. աչքէ՛ տես, զրմէն (ամենքը) սպանածին. լէ (այլ) իմ ձեռք չբռնեց օր ես լէ գքրդի սպանէնք, յելի, բալբի (թերևս) ճարմ էնենք մըր զլիսունս։

„Սարգիսն ու աղջիկ ծունկ կը չոքին, զԱստուած կը կանչին, Աստծու օղորմութիւնով բուք ու քամի կեկնայ. Սարգիս կը թալէ զաղջիկ ուր Բօլ չեռ- Խորս, զուրանք քաղբի բաղնէն (սպասակց) կը թալեն ցած. ու եւս ու եալլայ՝ կիզան ճայոց աշխարք“։

Ս. Սարգսի պատին կանայք լուացք չեն աներ, սապոն ձեռք չեն առներ, որ սրբու ձիու ոտքը չ'փռայ (սահկը, սայ- թաքել)։

Այդ շաբաթապահոց ուրբաթ օրը փոխնի կը սկստրաստեն եւ կը դնեն մի կողմ, որ ս. Սարգիսը գայ անցնի և իւր ձիու ոտքը զարկէ վրան։

(Եզիդներն ևս երկիւղածութեամբ փոխինդ կը պատրաստեն նոյն նպատակով)։

Այդ փոխնից սկստրաստուած ճաշից՝ աղջիկներ մէկ մէկ Բրդ-ճ (պատառ) կը դնեն ծառերու կամ տան տան ցուքքն- լու վրայ. որպէսզի Խծեղ թռչուն գայ տան և իրենց բախ- տը որոշէ։

Թռչուն՝ բրդուճը որու դուռ որ տարաւ, աղջիկն այն տու- նը հարս կերթայ։

Եթէ գերեզմանոցի կողմը տանէ՝ աղջիկը կը մեռնի։

Եթէ դէպի սարեր տանէ՝ օտար գիւղ հարս կերթայ։

Եթէ Եօն ճաճեռ- չը-ընե (կցուելու տեղը) տանէ՝ կուռով և աղմուկով մարդու կը տանեն։

Եթէ տեղն ու տեղը կերաւ, այն տարին ևս չամուսնա- նար աղջիկը։

Այս նշանաւոր բրդուճը կը կոչուի *. Սաբգոն Բրդ-ճ։

Ս. Սարգսի պահոց առաջին երեք օրերը ազապ տղայք և աղջիկները Տիաթու (մինչև երեկոյ) ծոմ կը պահեն. երեկոյին աղի, խիստ աղի բաղարջ կուտեն, որպէս զի քնու մէջ իրենց ջուր աս, երաղի մէջ ջուր տուղ աղջիկը՝ (ջուր) խմող երի- տասարդի ապագայ հարսնացուն է և, փոխադարձաբար։

Հայերը և Եղիշները չափազանց կը սիրեն սուրբ Սարգիսը. իսկ Յոնները այնքան կատեն, որ, ականատեսներու ասելով, եթէ աղբ պատին միտ չկարողացան ճարել, ոտքի տրեխները կեխեն և կուտեն:

Եղիշները ս. Սարգսի պահոց մէջ նաև երէ՛ք օր ծո՛մ կը պահեն:

Ճ. Սահեղապարծ. — Արծկէ զիւղաքաղաքի մօտ՝ Համանուն վանքի մէջ կը դռնուի դարերէ ի վեր փաթաթուած *Տառնա՛հ Տի*, որու Համար ժողովուրդը աւանդաբար կը պատմէ թէ «Քրիստոսի լողանալու պաշտի *Հոռն է*», որ Մարիամն ու Յովսէփը Եղիպտոսից բերեր են Հրէաստան, յետոյ Աւաքեալներու ձեռքով Հայաստան է փոխադրուած:

Այս մատունքի մասին զանազան տարակարծիք պատմութիւններ կան, որովհետև իրաւունք չկայ որ երբեք բացուի և ի՞նչ շնեւը իմացուի:

Ամէն ժամանակ, երբ՝ մարդոց թէ՛ անասնոց, Համաճարակ ցաւ կը տարածուի, ս. Սահեղապարծը յառուկ հրաւիրանօք բերելով երկրի մէջ կը պտտեցնեն:

Գ. Տէր Սէն (Հուսկայ) որդին է իւր մէջի պապարագը. — մեծ երկիւղածութեամբ և երդման մէջ միշտ կը լիշուի այս սուրբը և իւր արած միակ պապարագը, որու մասին ծերերը կը պատմեն:

«Ինքն Տէր Յուսկայ մի սուրբ և ընտիր վարդապետի որդի կը լինի, գաւառու? երկրէն. երիտասարդութեանը ժամանակ՝ իւր հօր ուղտերը կը վերցնէ և կերթայ գործով երկրէ երկիր պտտելու. ի միջի աչոց կը պատահի և մի գիւղ, ուր աղբիւրին մօտիկ կերթայ իւր ծարաւը չափեցնելու, այնտեղ մի շատ գեղանի աղջիկ կը պատահի, որի գեղեցկութեան կը զարկուի. բայց սովորութեանը Համաճայն՝ «այդ է՛, կասէ, մի բաժակ ջուր կուտնս որ օտարականը խմէ և անցնի».— Է՛հ այդ է՛, կը պատասխանէ աղջիկը. համեցէք, որքան ցանկութիւն ունիք խմելու:

«Օտարականը կանցնի, կանցնեն նաև ամիսներ և տարիներ, Աջամը (պարսկերէ) արշաւելով հացոց աշխարհը, աղջկայ հայրենիքը հուր և մոխիր կը դարձնէ, հարստութիւնը և ամէն եղած չեղածը աւարի կը մատնուի, այնպէս որ երկրի ժողովուրդը սովամահ ջլինելու համար կը փախչի այս ու այն կողմը: Գեղանի աղջիկն ու իւր հայր մայր

որ բարեբախտութեամբ կը պատահին այն զիւրը, այն տունը, ուր կը բնակէր իւր խորոշ երիտասարդը:

Օրիորդը որ քանակաւ չուէր նման բոլորել և աւելի գեղեցկացեր էր, նորից երիտասարդի ուշադրութիւնը կը գրաւէ և սուրա առաջարկութեամբ կամուսնանայ օտարական աղքատ աղջկայ հետ: Առաջաստի գիշերը, փեսան կասէ, սիրելի կինս, կը տեսնեմ որ քեզնէ քիչ քիչ կուգայ, հարսն ևս կը յայտնէ՝ ես ևս քեզնէ առաջ եմ: Հոտ կառնեմ, չարք ու փորձ անելով կիմանան որ այդ օրուայ հարս ու փեսան՝ տարիներ առաջ աղբիւրի վրայ քիչ և եւէջք կոչուածներն են:

Որովհետեւ մի անգամ իրարու եւէջք և քիչ ասել են, կուխտեն Աստուծու առաջ, ցիեանս եւէջք և քիչ մնալ և մեղաց պտուղը չճշակել:

Սիրելի կինս, կասէ եղբր նորափեսայ Յուսիկը, որովհետեւ պսակի սուրբ խորհուրդով ես ու դու միացած ենք, այլևս բաժանուելը անհնար է, թող բոլորը գիտնան՝ որ ես ու դու մարդ ու կին ենք, բաց մեր մէջը՝ եւէջք և քիչ:

Կանցնին օրեր ու տարիներ. Յուսիկը ձեռնադրուելով կը դառնայ Տէր Յուսիկ. նորից մի պարսկական արշաւանք տեղի կունենայ և երկրի աւերման հետ բազմաթիւ հայ գերիներ կը քշեն պարսկաստան, ի թիւս որոց և Տէր Յուսկայ երեցիկներ:

Գերեզմար պարսիկ խանը տիրուհու գեղեցկութեանը հաւնելով կը տանէ իւր հարեմը, բայց՝ սկզբից, արդար Յուսկայ սուրբ աղօթքով կը սկարանայ՝ և առանց մի չարութիւն գործելու՝ կը մեռնի: Կինը կստանայ խանի փոքր եղբայրը, սա ևս վախենալով որ իւր եղբօր պատժին չենթարկուի, կը կանչէ բողբոջ բող Բիբի անուն կինը և կը ծախէ սորա վրայ: Բիբի ևս հայ կը լինի կամ ուրիշ ազգ քրիստոնեայ:

Երեցիկներ կը յայտնէ բող Բիբուն՝ որ ինքը հայ քրիստոնեայ է և միևնույն ժամանակ քահանայի կին. թէ և երեսուն և հինգ տարի է որ ամուսնացած է՝ բայց Աստուծոն արած ուխտին համար, ինքն և իւր այր քահանան ճեղքող դուռ չեն ճաշակած, ուստի կը խնդրէ, զինք չմատնել անառակներու անարգ կեանքին. և այն վաստակը, կասէ Տիրուհին, որ պիտի ստանաս դու ինձանից բոլորովին զոհելի ճանապարհով, որովհետեւ ես լաւ ձեռագործ շինել գիտեմ, քեզ տասնապատիկ կարող եմ շահեցնել իմ ձեռագործներով: Որպէսզի իմ խօսքերուն դու հաւատարմութիւն տաս, այժմեանից կը յայտնեմ քեզ, որ երբ էլ լինի իմ ամուսին քահանան պիտի դայ ինձ փնտրելու, և դու կիմանաս որ ես սուտ չեմ խօսացեր:

Տիրուհուն առանձին սենեակ կը տրուի, ուր փակուած օրն ի բուն ձեռագործներ կը պատրաստէ: Օր մի չէ օր մի՝ մի երեկոյ բող

Բիբլին կը տեսնէ մի դժուծ ծերունի, որ կանգնած տիրուհու հետ ծածուկ կը խօսի, խօսակցութեան ժամանակ, կը տեսնէ որ «Բիբլին» Բիբլին կը զարհուրի, կուգայ և կընկնայ ծերունու ոտք ու ձեռքը. իմանալով որ նա այն քահանան է, որու մասին իւր գերին առաջուց արդէն յայտներ էր, կինը յանձնէ նորան. իւր անթիւ մեղաց թողութիւն լինելու համար, Աստուծու առաջ երդուեցնել կուտայ քահանան և իւր կինը. և պարտ դնել կուտայ վրանին, որ զոնէ մէկ անգամ իրենց «նշան» գնան. որպէսզի Աստուծոյ իրենց «տալ» տղան քահանայ դառնայ և «տալ» պարտէ իւր մեղաց թողութեան համար մատուցանէ:

Տէր Յուսիկն և իւր կինը կը վերադառնան հայաստան կունեան գաւաի մի՝ Ստեփան Ստեփանը մեծնալով կը լինի 20 տարեկան, երկրի մէջ սաստիկ թանկութիւն ու սով կը լինի, մի բեռ ցորեն վերցնելով ջրաղաց կը տանէ աղալու համար, ճանապարհին սոված հաղթանքներ պատահելով իւրաքանչիւրին մէկ մէկ բուռ ցորեն կը բաժնէ և բեռը բոլորովին կը դատարկուի, վախենալով որ դատարկ տուն վերադառնալով կարող է պատժուել, կը փախչի անապատներ ճգնելու, ուր երկար ժամանակ թաղնուած կը մնայ, մինչև որ ծնողքը մի կերպ իմանալով կերթան և իրենց մէկուձար որդին կը գտնին: Ինչպէս որ ուխտած էին վարդապետ ձեռնադրել կուտան և կը խընդրեն, որ առաջին պատարագը մատուցանէ բոզ Բիբլու համար:

Պատարագի ժամանակ Տէր Յուսկայ որդին կը տեսնէ սարսափելի «բն» ծաւ. որու մէջ ընկած կը լինի Բիբլին, և երկար աղաչանք ու պաղատանք անելուց յետոյ, Աստուծոյ ողորմութեամբ կաջողի բոզ Բիբլին ազատել արեան ծովից և հանել ցամաքը:

Այդ հաւաոր տեսիլքը այնքան խոր կազդէ Տէր Յուսկայ որդու վրայ, որ հաստատուն ուխտ ուխտեց Աստուծոյ առաջ, իւր կեանքի մէջ ալիւս երբէք պատարագ չանել:

Այդ անդրանիկ՝ անմահ սուրբ պատարագն է, որ այսօր ևս հայաստանի ամէն մէկ անկիւնը կը լիչուի, և անսուտ ու հաւատարիմ երդուելու համար՝ այսօր ևս մեծ ու փոքր, Տէր Սէն Կարոյ հէկէ պատարագովը կերդուին:

7) Թոռ-Տոռնալ. Այս անունով երկու ուխտատեղի-եկեղեցի կը գտնուի Բուլանքի գաւառը. մէկը Կոփ գիւղի մէջ, և միւսն Համգայ-Չէլի գիւղին, վերջնոյս համար աւանդութիւն կայ՝ որ Համգայ անուն շէլիսի որդին կը լինի. 5—6 տարեկան եղած ժամանակ, Հայոց տղաքներու նման՝ կասեն, ալանջները դինդ

անցկացնելով¹⁾ կերթար քահանաներու մօտ և կը կարդար Հայոց լեզուով: Հէջն Համզան իմանալով, մանուկ որդին դիւղից դուրս տանելով որախողիող կանէ, և անհաւատներու հետ նստելու կանգնելու համար կը կանչէ: Հայերը և որդու պիղծ մարմինը կը յանձնէ սոցա:

Փոքրիկ նահատակի վրայ աշկարայ լոյս իջնելու հայերը մատուռ կը կանգնեցնեն վրան և կանուանեն *Խոթ-հանու*: Ոմանք կստուգաբանեն իբր *Խոթ-լահու*, ալիւնքն՝ *սե-լահու*, որ կը նշանակէ՝ (քրդ.) թուխ-որդի, որովհետև *լահու* բառը քրդերէնի լաւ կամ լաւէ բառերու փոխոխուած ձևն է:

8) *Գահու հանու*. Ար յարգուին ջերմեռանդութեամբ նաև *գահու հանու*քը, որոնց տօնին բարեպաշտ կանայք և աղջիկները 40×40 ծուներ կը դնեն:

9) *Գաւառի մէջ* կը գտնուին զանազան շէն և աւերակ որոց մատուռներ, քարակոյտներ, խաչքարեր, աղբիւրներ, ծառեր, անտառներ և այլն և այլն, որոնց բոլորին ևս ուխտ կերթան և երկրպագութեամբ կը պատուին ու կը պաշտուին:

Սեղծագործութիւն առաւելի. նախահարց մասին եղած զրոյցները. աւանդութիւններ յեռնեալ մասին:

«Ստուած՝ օր զերկինքն ու զգետինք ստեղծեց պրծաւ, ափմէ հող առաւ զԱդամ լէ ստեղծեց, սորա (յետոյ) թմբրութեն թափեց վրը Ադամայ ձախ կողերուց կողմէ քաշեց ստեղծեց զԵւէն, զերկուս մէկտեղ զրեց ադամական (եղեմական) դրախտ»:

...զԱդամ ստեղծեց ափմէ հողէն,

զԵւէն քաշեց ձախակողէն».

(Ժողով. երգ).

«Սատանէն օձու կերպարանքով մտաւ ի Եւի խաչ (սիրտ), Եւէն խաբուաւ զպտուղ կերաւ, տուեց Ադամին՝ Ադամ լէ կերաւ, մերկացան.

¹⁾ Մինչև մեր օրերն ևս հայ երիտասարդները փոքր կախելու սովորութիւնը ունէին, սկսած փոքր հասակից՝ մինչև ամուսնանալը, բայց այժմ գրեթէ վերջացած է:

«...կնիկ սև օձու նման,
խաբեց Եւէն ու զԱդամ,
կաղնի վառից քօքէհան
Քաշէ, արի կնկալ ջան»:

(Ժողով. երգ).

Աստուած զԱդամն ու Եւէն զրախտէն տկլոզ ու մերկ դուռ էրեց, մութ զիշերն օր եկաւ՝ նստան լացին ու ողբացին, չընդինի թէ լուս պտի եղնէր. սատանէն էդ վախտ եկաւ մըտ Ադամ, ըսեց, ինչ կիտաք օր լուս լուսցում վըր ձըզի, Ադամն ու Եւէն ըսին՝ ինչ կուղիս կիտանք, թաքիլան (միայն) լուս բերիս: Խաբեց չէ՞սք առաւ թէ չէ՛ աղօթրան ճղճղնաւ (ճիւղաւորել) լուս լուսցաւ վըր առար աշխարքին. նոր փօշմընան, լէ ինչ օղուտ, եղածն եղեր էր, էն ձեռագիւր մնաց մըտ սատանին, Հարի Քրիստոս եկաւ աշխարհք խլեց դրեց խաչի տակ, Հալաւ կորաւ:

Առաջին երկրագործը. — Նրեշտակ Ամենակային եկաւ Ադամին սովորուց վար ու ցանք էնելը. Հարօր (արօր) շինելը և այն: Ըսեց, իտա լըմէն դաշտ ու դարան քու առջևն է, Գրծ Դե (տես երկրագործութիւն) քըզի արտ վարէ ցանէ, գքու իդարէն (ապրուստն) էրէ: Լճեց Ադամ գուր արօր, քշեց Հա քշեց, շատ ու քիչ գնաց, հրեշտակն եկաւ՝ ըսեց. — Հար յնւր պտի երթաս «Բ» մէ դիր (սահման) քու արտին. իդա խըտար տեղ քըզի կը Հասնի:

— Ես ինչ գինամ սինօռն ինչ է:

— Ցօրին չըս գինաց, բեր ակոս մէ թալինք յօդա, թըղ եղնի սինօռ մըջ ընձի ու մըջ քըզի, իդա գին (կողմ) ընձի էն գին քըզի:

Էն վախտն օր զակօս կը թալեն՝ Ադամ ուր ագահութենէն ոտքով գկոշտներ կը թալէր վըր հրեշտակի տիօռն, օր (իւր) ուր արտ մեծ եղնէր:

Աբէլի սպանուելը կը լիշուի Համաձայն ս. Գրքը, միայն կաւելացնեն, որ երբ Այնքնը մորթելու ձեւը չգիտէր, սատանէն մտաւ աղաւառ «Եւլէ» (կերպարանք), առաւ երկու սուր քարեր գրուսեց վըր իրարու, Այլին տեսաւ, սովորաւ, առաւ սուր քար մի և մորթեց իւր եղբայրը:

Այնքնի հարաշնչոս մասին ևս լիշատակութիւն կայ, որով

Աստուած պատժեց Կայինը, այդ կոտորները այնքան երկար էին, որ երբեք չէր կարող մի որևէ շինութեան մէջ պատու պարուէր և այդ պատճառով ստիպուած էր թափառել շարունակ: Այժմ երբ շատ ծեր մէկը դեռ փափաք յայտնէ ապրելու՝ կասեն «կուղէ Կայենի կոտոր Հանէ»¹⁾:

Մաթոս-Այն. — Ժողովուրդը կը կարծէ՝ որ Մաթոս աղան պէտք է որ տաճկական «ա» մի լինի (Մաթոս-Աղա): Երբ մի մարդ շատ ազա՛հ լինի՝ կանուանեն Մաթոս իբր թէ հետեւեալ պատճառով:

«Մաթոս աղէն 999 տարի ապրաւ, էն խրդար անկուշտ էր, օր խնդէնց Աստծուց ուրին (իրեն) էլ «ա» իւրէր: Աստուած լէ հրեշտակին ըսեց, գնա Մաթոսին ըսէ, թող զուր ձեռք զարկէ վր եզան պառեկին, ինչխդար օր մազ չընկաւ ձեռաց տակ, էն խրդար տարի լէ «ա» (կեանք) կիտամ ուրեն: Մաթոս աղան երբ հրեշտակից լսեց Աստծու հրամանը շատ թախեց վր եզան, հրեշտակ լէ ինադ էրեց զհոգին առաւ»:

Ջրհեղեղ. — Նոյեան Տապանի և ջրհեղեղի մասին ժողովուրդը՝ բացի ո. Գրքի աւանդածից, կաւելացնէ հետեւեալ զրոյցները:

«Էն գահ (ժամանակ) օր նաճրներ (հիւաներ) զտապան կը շինեն, նաճարներու հաջաթները (գործիք) ձէն կը հանեն Աստծու հրամանով — թէ ջրհեղեղ պիտի եղնի, ամա՛ (բայց) մարդ ականջ չըր էնի»:

Տապանի Գրգուռ լեռան վրայով անցնելն ու գլխաւորեալը, Սիւփան սարին հանդիպելը և, Սիւփանայ ասելը՝ թէ գնա՛ Մաթոս, Բաբելոն է շինուիլ, և Մաթոսի հրաւիրելը՝ թէ, լեռի վրայ չըլի՛ և ալլն, ծանօթ են բուլանըխցոյց:

Աշտարակաշինութեան տեղը Նոյեմ (Նեբրու) լեռան

¹⁾ «ա» ածանցական մասնիկով վերջաւորուած Կայենի բառն ևս կը գործածէ ժողովուրդը, երբ կուգ. մի գործի, առարկայի և այլն ահագին լինելի ցոյց տալ, օր. «իդա կայենական բան (գործ)» ո՛ր կընայ էնէ, բայց հնչումը քիչ կրտաբեբելի և այդ բառի առաջին վանկի «տառը կը հնչուի ինչպէս տաճկաց այն կամ արիֆին. — Կայենական»:

դուրսը կը տանեն, ուր Նամրութը (Բէլը) որ խիստ դժուար, ու զօրաւոր մարդ կեղնի, կանգնեց իւր նշանաւոր բերդը (աշտարակը):

Երբ որ Նամրութը՝ իւր բերդը կանգնեցնելու համար, ժողովուրդը չարաչար կըտանջէր և կընեղէր, բազմութիւնը մի անգամ բողոքեց, թէ՛ «չէ՛ վերև Աստուած կայ, չըվանենալ Աստծուց զմըղի խտա խտսը կը տանջիս», Նեբրովթը կը պատարխանէ. եթէ՛ վերև Աստուած կայ՝ պէտք է իմ բերդը այնքան բարձրացնեմ որ ծայրը հասնի Աստծու մօտ:

Մինչև ամպերը բարձրացնելով իւր բերդի ծայրը, առաւ իւր նետ ու աղեղը և «դէմ էրեց Աստծուն ու զարկեց, հըտ զարկելուն՝ երէ՛ր չուէ՛ կը պատեն (ընկնել) երկնուց. Նամրութ կը կարծէ որ զԱստուած սպանեց՝ բերեց ցած»:

«Աստու Նրամանքով մէկ մէկ աստի՛ (տափի, բարակ, քերծէ շուն) զորայ մըջիմ (մըջիւն) փէյրս կեղնին (զոյանալ), մըջըմներ կը քանդեն զբերդի հիւմք, տակ կը դարձնեն, էն մէկ օր բերդ՝ ինքն ուրին հըմալ կը փլի՛ օր դիտու քար կը թռնայ ի Ուրբէ՛ (Ուրհա, Եղեմիա)՝»:

Վանայ ծովու արևմտեան կողմը գտնուած՝ Դատվան

¹⁾ Մի որևէ տան (օջախի), քաղաքի, երևելի բերդի, աւերման, կործանուելու և քարուքանդ անելու պատմութիւնը արած ժամանակ վերջը «... ի Ուրբէ՛ քնայ» խօսքովը կը կնքեն: Այստեղ բաժանուեցան 72 1/2 ազգաց գլխաւորները և լեզուները: Ասորիք ամէնքից չետ եկան և նոցա բաժին մնաց ¹⁾ Բաւելոսները, իբր ամենաստոր լեզուն աշխարհի վրայ նոցա մնաց:

Կէ՛ր ասոր կը համարուին ըստ ոմանց Մարտիկէրը (բօշա, ցլիւան) և ըստ Տաճկաց՝ Եղբէրէրը:

Մարդպնիւր ծագման մասին կը կարծեն՝ որ երբ սոցա նախահայրը չկարողացաւ կին հարել, փաշինի կոչտին կը մերձենայ և որդիք կուեննայ: Եղբիներուն ևս միևնույն ծագումը տալով՝ կասեն որ հանդերձեալ աշխարհի մէջ Զորէրս անուանով կոչս աղջիկ մի ունին պաշտպան, որ բացի իւր հաւատակցներին, ոչ մի ազգի թոյլ չի տար արայաւելն մտնելու:

¹⁾ Բաբելոնեան խառնակութեան ժամանակ՝ ժողովրդի հաւատալով բաժանուած են մարդոց և անասնոց անդամները, լատիւթիւնները, լեզուները և ալլն և ալլն. բաժանելուց չստոյ, եկող մարդ կամ անասուն զրկուեր է մի որևէ անդամից կամ բարիքից.— Այսպէս Ասորիք ուշ գալով վատ լեզուն ստացան. տիզ (միջատը) ուշանալով յեռայեց զրկուեցաւ, ուղտը՝ ասորից և ալլն:

գիւղի հիւսիսը, մի ձորակի մէջ՝ ուղտի բարձրութեամբ և կա-
րաւանի ձևով կանգնած աւագաքարեր կան, որոնք «Նամրուլի
դէվէքն (ուշտեր) են եղի, օր ջուր կը կրէին ծովէն ի Նամրուլ
սար. բերդի շինութեան վախտն Նամրուլն որ կը հպարտնայ
մըջ ուր մտքին, Աստուած զէն դէվէք կէնէ քար»:

Նեմբրուլի հսկայական ոյժը ցոյց տալու համար, Նեմ-
բրուլի սարի արևելեան կողմը դառնող Թեղուտ գիւղին մօտիկ
գտնուած մի քանի մեծ և ահագին քարերը, ժողովուրդը կա-
նուանէ «Կարմնաքարեր» (պարսաքարեր) զորոնք՝ ամբարտաւան
բռնաւորը՝ լեռան դիմաց իւր պարսէտի մէջ զրած կը ձգէ
եղեր ներքէ:

Նախամարդոց մասին ժողովուրդի կարծիքը այս է որ
խիստ հսկայ յարթանդամ, վիթխարի, հզօր՝ և զօրաւոր են ե-
ղած, և մարդկութիւնը հետզհետէ մանրանալու վրայ է, կա-
սեն—հըմալ ժամանակ պտի գայ, մարդիկ հըմալ պտի ման-
տըրնան, օր եօթ հափ նստեն մէկ հափ էլ տակ, չերևան. այն
ժամանակ հափ պիտի գայ և աշխարհքի վերջը պիտի լինի:

Դասիւն—Մհերի կցկտուտ պատմութիւնը երբեմն ծերերից
կը լսուի, և ազգային կեանքի մասին դարաւոր լուծիւն պա-
հելուց լետոյ՝ երևան կուգայ «Ծրդատ (Տրդատ) մեծ Թաղաւոր,
որ 40 գոմէշի ուժ ունէր և Կալի (վէմ քար) կը շրջէր»:

Լուսաւորչի՝ խոր վիճապ ձգուիլը, թունաւոր օձերու գալը
և ս. Լուսաւորչի ոտքը ու ձեռք համբուրելը, սրբու մէկ ան-
գամ «խող» ասելովը Ծրդատայ խող դառնալը, լետոյ բժշկուիլը,
կոյսերու նահատակութիւնը ¹⁾, Լուսաւորչի Ծրդատայ գործակ-
ցութեամբ իբր 1601 էֆէնցիներէ կանգնելը՝ ժողովուրդի մէջ կը
պատմուին շատ ու քիչ աղաւաղումներով:

Էջմիածնայ տեղը տիլ ու տլոնոց էր (տղմուտ, ճախին) Լու-
սաւորչի շիւարեր էր՝ չըր գինի չուր զժամու հիմ թալէր. մըջ տեսիլ-
քին՝ Քրիստոս լիջաւ չերկնուց, հափ հափ ի ձեռք, բոլորմանի խաղեց
(գծեց) զտեղ ցուցուց, Լուսաւորչի էն լուսուն չելաւ զհիմք թալեց:

¹⁾ Մամիկները կաւանդեն, որ երբ Ծրդատ բռնեց Հռիփսիմէի ծա-
մերը դրեց սան (սեան) տակ, սուրբ կոյսը՝ որ Ծրդատայ չափ ուժեղ էր,
քաշեց որ իւր ծամերը հանէր սեան տակից, զոյգ հիւստակը (հիւսկէն) մնաց
քարի տակ և ինք փախաւ պրծաւ:

Հման (Հիմքի) քարեր՝ Ծրդատ Մասիսու սարէն կը շալկէր բերէր, շալկելու վախտ Լուսաւորիչ յետեանց կը կարդէր ու կաղօթէր Թաղաւորի համար»:

Մի անգամ Ծրդատ ձանձրանալով Լուսաւորիչ պտպտիկներեց (աղօթք) ասած կը լինի՝

«Զըմ ձանձրանայ քարն ի պառեկիս.

կը ձանձրանամ, որ պտպտիկն է յետեիս»:

Լուսաւորիչը բարձրանալով պտպտիկը կը վերջացնէ, և Ծրդատայ ոտքերը մինչև ծնկները կը խրուին գետնի մէջ. դառնալով դէպի Լուսաւորիչը՝ կասէ.

«Դէհ պտպտայ, պտպտայ.

Պտպտիկդի հոգիս»:

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՆՈՐՆԵՐԸ

Արեւ. Խրեգոսի. — Արեւ, ինչպէս և բոլոր երկնային լուսաւորները, այժմ ոչ Թէ կը պաշտուին, այլ կը յարգուին. բայց և այնպէս այդ յարգանքը անցեալ պաշտաման մի հետքն է, որ մնացել է ժողովրդի մէջ:

Ձմեռնային արեւադարձից յետոյ, երբ առաջին անգամ արեւու շուրջ կը զարնէ տան պատի վրայ՝ եւ և արեւը կը քսեն, որ եկող տարուայ իւրն ու հացը առատ լինեն:

Արեւ (նաև լուսին) երբ խաւարի, պատերազմի, արնհեղութեան նշան կը համարուին:

Խաւարումը կառաջանայ չոր Վեշապի պատճառով, որ կուգէ կու տալ արեգակը, խաւարման ժամանակ հրացան կարճակեն և ծնծղաներ կը զարկեն չար վիշապը փախցնելու համար:

Երազով երբ տեսնեն որ արեւ (նաև լուսին) խաւարի, Թաղաւորին մահու վնաս կը համարեն:

Արեւի եղած երդումը. — Իդա (այս) բժիկ (լուսաւոր) արեւ վկայ եղնի. իմ արեւ, քու արեւ, իմ արեւ արեւ և այլն և այլն:

Անէծքներ. — Քու արեւ ճեւեռի, քու արեւու դէմ եղնի (կեանքիդ դէմ). քու հանաչ ու հարե՞ծ արեւ կտուտի (կտրատել): Իդա արեւ տայ զքու պատիժ և այլն:

Բարեմաղլանութիւն. — մեռնիմ քու արեւուն, յերկէն արեւ եղնիս, կանչնայ քու արեւ, Աստուած զքու արեւ բաշխէ և այլն: